ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2011թ. չորրորդ եռամսյակում կատարած աշխատանքները

2011թ. ընթացքում հավաքագրվել է 502342.8 հազ.դրամի եկամուտ,ինչն ուղղվել է համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը: Բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականը ունի հետևյալ տեսքը՝

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը 01.01.2012թ.դրությամբ

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Դեկտեմբերի կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	470927.51	502342.81	106.67%
1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	37200.00	35634.11	95.79%
1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	17557.00	17394.83	99.08%
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	13193.00	14013.78	106.22%
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	5100.00	4315.70	84.62%
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	158006.00	158006.00	100.00%
3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	37900.00	39073.87	103.10%
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ	2200.51	2200.51	100.00%
3.5 ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	18571.00	18496.79	99.60%
3.6 ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ	1200.00	1100.25	91.69%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	180000.00	212106.98	117.84%
ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	170000.00	210723.03	123.95%
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	10000.00	1383.95	13.84%
ԸՆԴԱՄԵՆԸ	470927.51	502342.81	106.67%

Դիլիջան համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը 01.01.2012թ. դրությամբ

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (դրամ)	Փաստացի ծախսը (դրամ))	Ծախսը պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	798887207.00	663652885.10	83.07 %
(Աղբահանում)	37200500.00	37054108.00	99.61 %
(Այլ մշակույթային կազմակերպություններ)	4691500.00	4671487.00	99.57 %
(Արտադպրոցական դաստիարակություն)	37743659.00	36500069.00	96.71 %
(Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ)	2116300.00	2116300.00	100.00 %
(Բնակարանային շինարարություն)	29231510.00	8916203.00	30.50 %
(Գյուղական խորհրդատվական ծառայություն)	30000.00	30000.00	100.00 %
(Գյուղատնտեսություն/անասնաբուժ.ծառայություն)	500000.00	500000.00	100.00 %
(Գրադարաններ)	14837880.00	14837880.00	100.00 %
(Դիլիջանի քաղաքապետարան)	140745049.00	122560354.00	87.08 %
(Ընդհ.բնույթի այլ ծառայություններ)	2271710.00	2271710.00	100.00 %
(Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ)	3313881.00	3313881.00	100.00 %
(Ընտանիքի անդամներ և զավակներ)	3500000.00	3500000.00	100.00 %
(Թանգարաններ և ցուցասրահներ)	12755020.00	11362627.00	89.08 %
(Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ)	1183500.00	1183500.00	100.00 %
(Հանգստի և սպորտի ծառայություններ)	2053000.00	2052937.00	100.00 %
(Հեռուստառադիոհաղորդումներ)	222000.00	222000.00	100.00 %
(Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում)	1281547.00	1281546.00	100.00 %
(Հրատարակչություններ,խմբագրություններ)	292400.00	284389.00	97.26 %
(Ճանապարհային տրանսպորտ)	277000000.00	217462815.00	78.51 %
(Մշակույթի տներ, ակումբներ)	24122444.00	20779927.00	86.14 %
(Նախադպրոցական կրթություն)	96658450.00	91690947.00	94.86 %
(Նավթամթերք և բնական գազ)	33256800.00	29690135.00	89.28 %
(Շրջակա միջ.պաշտպանություն)	17318870.00	1450000.00	8.37 %
(Սոցիալական հատուկ արտոնություններ)	1176000.00	1176000.00	100.00 %
(Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ)	106470.00	0.00	0.00 %
(Փողոցների լուսավորում)	50853100.00	48532270.10	95.44 %
(Քաղաքացիական պաշտպանություն)	211800.00	211800.00	100.00 %
(Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ)	4213817.00	0.00	0.00 %
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	798887207.00	663652885.10	83.07 %

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները: Չորրորդ եռամսյակում յուրաքանչյուր նորածին երեխաների համար 45 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Աշնանային զորակոչով ՀՀ Զինված ուժերում ծառայության մեկնող թվով 50 զորակոչիկների,համայնքի տարբեր ոլորտներում զբաղված թվով 50 լավագույն աշխատակիցների տրվել են նվերներ, կազմակերպվել է Ամանորի տոնական միջոցառում: Դիլիջանի «Հույսի կամուրջ» ՀԿ և Դիլիջանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկություններ հաճախող թվով 566 երեխաների տրվել է ամանորյա նվերներ:

Իրականացվել է Շամախյան թաղամասի Վ. Անանյանի փ. 1-ին նրբ., Շամախյան փ. վերջնահատվածի, Վ. Անանյանի փ., Շամախյան փ. 1ին նրբ., Այգեստան փ. և Այգեստան փ. 1ին նրբ. գազաֆիկացման աշխատանքները: Կատարվել է Մյասնիկյան փ. /հատված կմ 1+000 - կմ 1+250/ ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման աշխատանքներ: Խճապատվել է Շամախյան թաղամասի Վ. Անանյան և Այգեստան փողոցը միացնող և ակումբի շենքից մինչև Վ. Անանյան փողոցին միացնող հատվածների ավտոտրանսպորտի երթևեկելի մասը: ՀՊԾ-ի «Սնունդ Աշխատանքի Դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր, որի շրջանակներում կատարվել է կենտրոնից դեպի հիվանդանոց տանող հետիոտն ճանապարհի վերանորոգման աշխատանքներ, Դիլիջան քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին կատարվել է նյութերի տեսքով:Վերանորոգվել է թիվ 3 մանկապարտեզի շենքը:

Վերակառուցվեցին Իվանովո փ. թիվ 35 տանը, Մանթաշյան փ. թիվ 3 և 5տներին, Սայաթ-Նովա 121, 106 և 108 տներին հարակից համայնքային նշանակության ճանապարհներին հարակից փլված հենապատերը:

Վերականգնվել է Մյասնիկյան փողոցը Սայաթ-Նովա փողոցի հետ կապող հետիոտն ճանապարհի, Վասիլև փողոցի փողոցային լուսավորության համակարգը:

Դիլիջան քաղաքի կենտրոնական հրապարակն առավել գեղեցիկ դարձնելու համար ձեռք է բերվել և տեղադրվել լուսադիոդային ժամացույց – ջերմաչափ:

Աշխատանքներ են իրականացվում աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման ուղղությամբ:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ